ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 01

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում 2018թ. սեպտեմբերի 4-ին ժամը 11:00-ի կայացած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետ***
Ա.Սարգսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Ա. Նիկողոսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Գ. Աթանեսյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ***
Հր. Գևորգյան	***ՀՀ Արագածոտնի մարզպետարանի Գլխավոր քարտուղար***

Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմը, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ, Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

Օրակարգ

1. Մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշների մասին /զեկ. մարզպետի տեղակալ Գ. ԱԹԱՆԵՍՅԱՆ/:
2. Մարզի համայնքներում աղբահանության կազմակերպման գործընթացի մասին /զեկ. մարզպետի տեղակալ Ա. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ/:
3. Մարզում հողօգտագործման ընդհանուր վիճակի մասին /զեկ. մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. ՀԱԿՈԲՅԱՆ/:
4. Համայնքներին սուբվենցիաներ տրամադրելու գործընթացի մասին (զեկ. մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Ի. ԲԱՐՍԵՂՅԱՆ):
5. Աղքատության կարիքավորության աստիճանը որոշելու համար պահանջվող փաստաթղթերի և կարգի մասին (զեկ. մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի պետ Կ. ԹԱԹՈՒԼՅԱՆ):
6. Հայտարարություններ – Հ. Ասատրյան. Յու. Ազատյան

1.Մարզի համայնքների բյուջեների կատարման եւ սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի մասին զեկուցեց մարզպետի տեղակալ Գ. Աթանեսյանը: Նա տեղեկացրեց,որ 2018թ. հուլիսի 24-ի դրությամբ փաստացի մարզում ընդհանուր 39% հավաքագրում կար, ինչից հետո համայնքների ղեկավարների հետ աշխատանքային խորհրդակցությունների անցկացման արդյունքում սույն թվականի օգոստոսի 31-ի դրությամբ շուրջ 50 տոկոս հավաքագրում կա: Ամսվա վերջին գրանցված արդյունքը գումարային արտահայտությամբ գերազանցում է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հավաքագրման գումարային արդյունքին: Եթե մարզի խոշոր եւ խոշորացված համայնքներում հավաքագրման տեմպերը բավականին բարձր են (բացառություն են կազմում Արագածավան եւ որոշ չափով նաեւ Ծաղկահովիտ համայնքները), ապա փոքր համայնքներում պատկերները հակասական է:, Հարկ է ընդգծել նաեւ, որ գրեթե չկան համայնքներ, որոնք պարտքեր կուտակած չլինեն:

Եվ այս չափազանց կարեւոր խնդրի լուծման համար համայնքների ներդրած ջանքները գրեթե զրոյական են, քանի որ համայնքների ղեկավարները փաստացի իրենց դուրս են դրել վարչական վարույթներ հարուցելու կամ օրենքով սահմանված կարգով դատարան դիմելու իրավական հարթությունից: Նշվեց, որ այսուհետ լուրջ վերամշակման են ենթարկվելու բոլոր այն նորմատիվները, որոնք կապված են դոտացիաների տրամադրման, ինչպես նաեւ համայնքներում հրատապ եւ սուբվենցիոն ծրագերի իրականացման հետ: Առաջարկվում է այնպիսի փաթեթ, որ սեփական եկամուտների հավաքագրման տեմպերն ուղիղ համեմատական լինեն դոտացիաների չափի, տրման կարգի, պայմանների, ինչպես նաեւ համայնքներում տարբեր պետական ծրագերի իրականացման հետ: Որպես վերջաբան, մարզպետի տեղակալը նշեց, որ բնակիչների բարօրությունը տեղական ինքնակառավարման բուն նպատակն է:

Այդ կապակցությամբ առաջարկվեց ցածր ցուցանիշ ունեցող համայնքների ղեկավարներին՝

Միջոցներ ձեռնարկել առաջիկայում սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները բարձրացնելու ուղղությամբ:

2. Մարզպետի տեղակալ Արծվիկ Նիկողոսյանը խոսեց համայնքներում աղբահանության կազմակերպման գործընթացի մասին: Նշվեց, որ մարզում առկա 135 աղբավայրերից 124-ը փակված է, իբրեւ հիմնական աղբավայր գործելու է 11-ը: Տեղեկացվեց նաեւ, որ մարզում նախապատրաստական աշխատանքներ են տարվում սեպտեմբերի 8-ին կայանալիք համապետական շաբաթօրյակի աշխատանքների եւ սեպտեմբերի 15-ին նախատեսվող ,,Մաքուր մոլորակ,, ծրագրի կազմակերպման ուղղությամբ: Խոսվեց նաև առաջիկայում ,,Շանթ 2018,,-ի շրջանակներում նախատեսվող աշխատանքների և մասնակցության մասին:

3. Մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Հակոբյանը ներկաներին տեղեկացրեց մարզային հողային պետական տեսչության կողմից կատարված աշխատանքների և առկա հիմնախնդիրների վերաբերյալ, մարզի հողային հաշվեկշռի, քաղաքացիներին՝ սեփականության իրավունքով պատկանող, համայնքային սեփականություն հանդիսացող հողերի և գյուղատնտեսական նշանակության հողերի վերաբերյալ տեղեկատվություն: Ներկայացվեց նաև համայնքային սեփականություն հանդիսացող վարելահողերից վարձակալությամբ տրամադրված հողերի, պտղատու այգիների, խոտհարքների, արոտների վերաբերյալ: Նշվեց, որ առ այսօր մարզի 24 համայնքներից ստացվել է 37 հողաշինարարական գործ, որոնցից 20-ի՝ 13.41 հա ընդհանուր մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխվել է, իսկ թվով 17 հողաշինարարական գործ՝ 115.07 հա ընդհանուր մակերեսով գտնվում է քննարկման փուլում: Առ այսօր մարզում համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդ-վաճառքով օտարվել է 315 միավոր հողամաս՝ 326.7 հա ընդհանուր մակերեսով, որի արդյունքում համայնքների բյուջե է մուտքագրվել 77 188 560 ՀՀ դրամ:

Այս ոլորտում մարզում լուծում պահանջող խնդիրներ են հանդիսանում՝

- համայնքների սահմանների և կադաստրային քարտեզների ճշգրտումը, ինչպես նաև հողային հաշվեկշռի վերանայումը,
- հողամասերի նպատակային և գործառնական նշանակության (հողատեսքերի) համապատասխանեցումը փաստացի օգտագործմանը,
- փաստացի ջրովի և անջրդի հողամասերի վերանայումը և վերահաշվառումը:

4. Լսեցին ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն / Ի. Բարսեղյան/: Ծրագրային հայտի օրինակելի ձևաչափը տրամադրվել է մարզի համայնքների ղեկավարներին և առաջարկվել է առաջնորդվել ծրագրի կազմման մեթոդական ցուցումներով և ձևանմուշով: ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադարման ծրագրին մարզի **72** համայնքներից մասնակցել են **21** համայնք, որից **4-ը՝** խոշորացված համայնքներ են: ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել **37** հայտ, որից 01.09.2018թ. դրությամբ հավանության են արժանացել **20** հայտ: Հավանության արժանացած ծրագրերի ընդհանուր բյուջեն կազմել է **508 038 621** ՀՀ դրամ, որից համայնքների մասնաբաժնի չափը կազմել է **279 575 782** ՀՀ դրամ, այլ ներդրումները կազմել է **16 291 646** ՀՀ դրամ: Համայնքների կողմից ներդրումային ծրագրերի աջակցմանն ուղղված խորհրդատվական ելույթում հնչեցին յուրաքանչյուր ծրագրին մեթոդական և բովանդակային օգնություն ցուցաբերելու մարզպետարանի պատրաստակամության մասին: Խոսվեց այն ոլորտների մասին, որոնցով հնարավոր է նոր ծրագրերի միջոցով զարգացում ապահովել համայնքներում:Նշվեց նաև, որ մարզպետարանը այս հարցում կարող է միջնորդ հանդիսանալ, եթե ծրագրերը ճիշտ և նպատակային կազմվեն:

5. Նպաստառու ընտանիքների ՍԱՏԳ ներկայացվող փաստաթղթերի անհամապատասխանության մասին զեկուցեց մարզպետարանի սոցիալական ապահովության բաժնի պետ Կ. Թաթուլյանը: Խոսվեց հիմնականում անասնագլխաքանակի տեղեկանքի մասին: Նպաստառու ընտանիքների կողմից տրամադրված անասնագլխաքանակի վերաբերյալ տեղեկանքների անհամապատասխանությունը հիմնականում առաջանում է տարեսկզբին՝ համայնքներում ստեղծված հանձնաժողովների կողմից անասունների հաշվառման ժամանակ: Հանձնաժողովները անասնագլխաքանակը հիմնականում հաշվառում են նպաստառու ընտանիքիների չափահաս անդամների ծնողների անվամբ, որոնք հաշվառված են առանձին հասցեում, որպեսզի նպաստառու ընտանիքները չզրկվեն նպաստ ստանալու իրավունքից:Այս խնդրի կարգավորման համար առաջարկվեց, որ հանձնաժողովների կողմից և անասնաբուժների կողմից կատարվող անասունների հաշվառումը իրականացվի բացառապես տվյալ հասցեում բնակվող ընտանիքի չափահաս անդամի անունով:Առաջարկվեց նաև՝ մինչև նպաստառու ընտանիքներին անասնագլխաքանակի վերաբերյալ տեղեկանքի տրամադրումը՝ անասնաբուժները կատարեն պարտադիր ստուգայցեր: Քիչ չեն նաև այն դեպքերը, որ քաղաքացիները փաստագրման ներկայանալուց հետո ընտանիքում առաջացած փոփոխությունները չեն ներկայացնում գործակալությանը: Գործող կարգի համաձայն՝ յուրաքանչյուր ամիս ընտանիքում կատարված փոփոխությունների վերաբերյալ քաղաքացիները(նպաստառու ընտանիքների չափահաս անդամներից մեկը) պարտավոր են տեղեկացնել գործակալությանը անասնագլխաքանակի փոփոխության, աշխատանքի, եկամուտի այլ փոփոխությունների մասին, որը նույնպես առաջ է բերում եկամուտի հաշվարկի անհամապատասխանություն: Նշվեց, որ այս ոլորտում հետեևողական աշխատանքները շարունակվելու են և անհրաժեշտություն կա համայնքներում բարձրացնել անասնաբուժների հաստիքների կարևորության դերը:

6. Մարզխորհրդի նիստը ամփոփեց ՀՀ Արագածոտնի մարզպետ Ա. Սիմոնյանը, որը անդրադարձավ անասնաբուժների հաստիքների կարևորությանը: Առաջարկեց քննարկել համայնքերում իրականացվող աուդիտի նպատակահարմարության և արդյունավետության հարցը: Համայնքի խնդիրների նկատմամբ սրտացավություն և պատասխանատու

վերաբերմունք է անհրաժեշտ այսօր, երբ գյուղում ապրելը դարձել է հերոսություն: Չպետք է անտարբեր լինել համայնքի խնդիրների նկատմամբ: Սեփական եկամուտների հավաքագրումը համայնքում քարը քարին դնելու հնարավորություն է և պետք է այդ հնարավորությունները ճիշտ օգտագործել:

Այդ կապակցությամբ մարզպետը առաջարկեց համայնքների ղեկավարներին՝

Ուսումնասիրել և քննարկման արդյունքում կազմել համայնքում հրատապ լուծում պահանջող ծրագրերի նախագիծ-նախահաշիվ և ներկայացնել դրանք մարզպետարան համապատասխան ընթացք ստանալու նպատակով:

Մարզխորհրդի նիստին հնչեցին նաև հարցեր, որոնց տրվեցին պատասխաններ եւ պարզաբանումներ:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ ***Ա. Սիմոնյան***